According to both the original German biography, which was written by a colleague of Scheubner-Richter in the Ottoman Empire, and Kaiser's introduction, Scheubner-Richter took a commendable position in trying to avert the destruction of Armenians. His contacts varied from direct relations with the Armenian prelate of Erzurum (Smpad Saadetian), and the provincial governor (Tahsin Bey), to various intermediaries and Armenian deportees. Scheubner-Richter also communicated his concerns to the German ambassador Hans Von Wangenheim in Constantinople, and thus created an archival record of what he observed around him. He was not the only German consul in the Ottoman Empire who acted to save Armenians, yet as in other cases, the German foreign office was confronted with the hard reality that the fate of Ottoman Armenian was an internal Ottoman matter, while the German priority had to be the maintenance of the Turko-German alliance and winning the war.

Consequently, German intercession on behalf of Armenians was limited, and this limitation allowed the Allied powers and some later commentators to allege German complicity in the destruction of Ottoman Armenians in 1915. A German Officer during the Armenian Genocide brings important new research into light for a more informed discussion and substantive analysis of the subject matter.

According to Ara Sarafian, the publication of A German Officer during the Armenian Genocide is part of the Gomidas Institute's ongoing commitment to engage the Armenian Genocide issue in a critical manner. This publication is the Gomidas Institute's second publication addressing German involvement in the Armenian Genocide.

stroyed or left for the West with people. However, what is more tragic, Byzantium which restored its dominance over Armenia displaced the old Christians, the supporters of the Asian despots (they were lucky because they moved to Cilicia and established a kingdom there) from the country.

However, the mores of the marginal in the country did not change over the time. Like the alliance with the Arabs in the 8th century, in the 13th century these forces allied with the Mongols. It ended in the final displacement of the Armenian people who moved to Eastern Europe. For the marginal, it was not good, the country without people appeared in the hands of the Asian despots succeeding one another. They could only consider their aspirations satisfied and take pride in a history of

millennia. And very few people are interested in what was created in Armenia during the periods of alliances with the eastern despots. Now we know that nothing. Whatever was created in Armenia in those centuries were in the period of sustainable development of the Armenian people as part of the Christendom. The ruins of the cathedrals of Avan, Zvartnots, Ani, as well as the "deadly" 8-10 centuries in Armenia are evidence to the balance of the "philosophical debate" in Armenia.

Dr. Ronald Marchese to Speak at Fresno State on "Armenian Constantinople"

Dr. Ronald Marchese will discuss his recent research in Constantinople/Istanbul with a talk on "Armenian Constantinople/Istanbul: Church, Society and Culture," at 7:30 PM on Wednesday, February 11, 2009. The lecture, part of the Armenian Studies Program Spring 2009 Lecture Series, will be held in the University Business Center, Alice Peters Auditorium, Room 191, on the Fresno State campus.

Dr. Marchese is professor of ancient history and archaeology at the University of Minnesota, Duluth and has spent the last several years documenting the rich cultural history of the Armenians in Constantinople, by studying the works of arts that the Armenians produced. He will accompany his talk with slides of some of the artwork that he has catalogued.

The objects he studies are symbolic representations of inherent beliefs that define a specific community. They are connected to Armenian Christian doctrine, the unity of the Christian community, the Armenian people's unwavering attachment to the Divine mysteries expressed in Christ's life and finally the glorification of God. Making objects for the Church was a pious act and each item produced and donated was considered a personal statement of faith.

Consequently, the history of a people can be documented by the physical objects they produce and use in daily life and ritual. Things embody social values, define moral and ethical principles as well as illustrate artistic achievement. The collection of objects in the Armenian Orthodox churches of Istanbul demonstrates the interconnection between material culture, artisanship, and communal belief. Featuring high levels of artistic and technical sophistication, objects of faith were commissioned by church members as personal and communal expressions glorifying God.

Like many collections, the Arme-

nian Orthodox Church treasuries in Istanbul contain objects that were never meant to be displayed in a museum, appear in a book or be part of a scholarly lecture. Their primary purpose was to serve, honor, and glorify God. They were a physical testament to religious belief that symbolized the intense spiritual conviction of the lay community.

The objects under study – those that make up a corpus of previously unstudied and unknown artifacts – are a physical reminder and tribute to a people who tenaciously maintained a national identity through the objects they produced, donated, and used in the celebration of their faith. They defined a unique style of religious art, the "Constantinople Style" that reflected the opulence and grandeur of a city many Armenians came to love as their own. Through their labor the city and the Church prospered and, in time, the community became one of the most important ethnic groups in Istanbul.

Dr. Marchese received his PhD from New York University and has a distinguished career in archaeology, having conducted research at the Plataiai Archaeological Excavation in Greece and at Tel Dor in Israel. He is the author of numerous articles and book chapters in the field. He is an alumnus of California State University, Fresno.

He is the author of the forthcoming book, *Splendor and Spectacle: The Armenian Orthodox Church Textile Collections of Istanbul*, M. Breu (Çitlembik Ltd., Istanbul), in press, 2008. He has authored several other books on art and weaving.

The lecture is free and open to the public.

Relaxed parking is available in Lot J or in the UBC Parking Lot, after 7:00PM.

For more on the lecture please contact the Armenian Studies Program at 559-278-2669.

Marginalization May Pose Threat to Security of Armenia

Continued from page 3

Christian world. It went but did not make it because it was hindered by the despots the Armenian marginal invited from Asia. The problem is not that the invited despots were bad, simply they were the enemies of Byzantium. And their only friends were the obsolete old Christians, the marginal whose main foe was the Armenian people.

The result of such an alliance was the regular expansion of eastern despots and the destruction of people. There was such destruction in the 8th century when the Christian church and the pro-West Christian nobility and the new Christian church were destroyed, allying with the Arabs, and people were displaced from the country. The nobility was de-

Armenian people. Some fell victim to the aggression of despots, others to the retribution of Byzantium. Yet the thirds were killed by the Turks centuries later. Instead, the marginal are safe and sound. And apparently they do not forget their traditions.

Hence, Serge Sargsyan's "camp" did not start from square one. Apparently some well-trained guys have persuaded him to study the subtleties of the philosophy of the Armenian marginal. The alliance with Asia at the expense of the freedom of people is the guarantee of government and personal welfare. At least, hope for such guarantees. However, Asia changed a long time ago, unlike Armenia, more exactly the Armenian marginal minority. However, the marginal of Armenia have no place to retreat. They did not estimate everything on March 1, and they will cling to everything. This is the danger of the philosophy of the Armenian marginal in 2008. There is nothing original about this philosophy. Instead, it poses a threat to the security of Armenia.

ՍՓԻՐԵԱՎԱՅ ՄԱՍԻՍ

«ԶԱՅԱԿԻՐ»Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԱԹՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Հպարտութեամբ եւ ուրախութեամբ կը յայտարարենք թէ այս տարի «Զաչակիր» թերթը կը բոլորէ իր հիմնադրութեան վաթսուամեակը:

Տարիները կը սահին եւ այսօր իր ետին կը թողու մեղուաջան աշխատանքի ու մամուլային արդիւնաւէտ գործունէութեան 60 տարիները:

Երջանիկ հանգրուան մըն է այս մեզի համար եւ առիթէն օգտուելով անգամ մը եւս ուշադրութիւն կը կեդրոնացնենք այդ 60 տարիներուն վրայ:

Սփիւռքեան թերթի երդիքին տակ խմբագիրներ, աշխատակիցներ եւ ամբողջ անձնակազմ մը միասնաբար ինչպիսի հերոսական ու գոհարեւելի աշխատանք պէտք է տանին, որպէսզի այդ հայ մամուլը գոյատեւէ, հետզհետէ գորանալով իր առաջնութիւնը շարունակէ ամբողջ 60 տարիները: Մեր թերթին երդիքին տակ ահաւասիկ այսպիսի աշխատանք մըն է որ կատարուեցաւ ու կը կատարուի:

Ուրեմն ասկէ 60 տարիներ առաջ «Զաչակիր» թերթը սկսաւ լոյս տեսնել 5 Մայիս 1948ին, հիմնադրութեամբ՝ ողբ.ք Հայկ ժամկոչեանի եւ Արշամ Տատրեանի, իսկ 7 Նոյեմբեր 1963ին լոյս տեսաւ «Զաչակիր» Շաբաթաթերթի Նոր Շրջանի առաջին թիւը, որուն հիմնադիր-խմբագիրը եղած է անբիծ հայրենասէր ողբ.Ք Սարգիս Պալայեան, տնօրէնը՝ յիշատակի արժանի ողբ. Ջալէյ Պալայեանը եւ արտոնատէրը՝ Տիկ. Այտա Սերվոբեան-Պալայեան: Իր բաժինը բերած է նաեւ տքնաշուն աշխատանքով ողբ. Նուպար Պալայեան: Սակայն Ս. Պալայեանի երկրէս վերջնականապէս մեկնելու պատճառաւ, 1979էն սկսան խմբագիր-տնօրէնը եղած է Ջ. Պալայեան եւ 1989էն մինչեւ այսօր անոր խմբագիրն է Ընկ. Աւետիս Մովսէսեան եւ տնօրէնը՝ Պրն. Մարտիրոս Պալայեանը, որ լոյս կը տեսնէ Հայկական Ընթերցասրահի հովանաւորութեան տակ:

Նշենք որ 1963-1989 տարիներուն «Զաչակիր» եղած է շաբաթաթերթ եւ 1989էն մինչեւ այսօր լոյս կը տեսնէ իբրեւ երկշաբաթաթերթ:

Յիշենք նաեւ թէ 1966-1972 տարիներուն «Զաչակիր» լոյս ընծայած է Մարզական-Երիտասարդական ամսօրեայ յաւելում մը եւ 2001էն մինչեւ այսօր կը հրատարակէ «Միժեռնակ» եռամսեայ երաժշտական յաւելում մը, խմբագրութեամբ՝ արուեստագէտ Հայկ Աւագեանի:

Պէտք է ըսենք որ 1963էն մինչեւ այսօր շատ բան փոխուած է հայ թէ միջազգային մամուլի իրականութեան մէջ: Ժամանակին թերթիս կ'անդրադառնար հայրենի, եզրափակող եւ սփիւռքահայ լուրերուն, ինչպէս նաեւ եզրափակող քաղաքական իրադարձութիւններուն, սակայն այսօր գոյութիւն ունին հաղորդումներու զանազան ժամանակակից այլ ձեւեր լուրերը

տարածելու համար, ինչպէս՝ ինթերնէթ, տիշ եւ կայքէջեր, որոնց միջոցաւ հանրութիւնը ժամ առ ժամ կրնայ հետեւիլ հայկական, տեղական եւ միջազգային անցողադրձերուն: Եւ քաղաքական դէպքերը այնքան արագ կը գարգանան որ երկշաբաթաթերթի մը էջերը անկարող են հետեւողականօրէն ներկայացնել զանոնք:

Իրողութեան մէջ ժամանակակից բոլոր միջոցները չեն կրնար փոխարինել տպագիր հայ մամուլը եւ հայ մեարտպեան գիրքերը, որ մուտք կը գործէ ամէն բաժանորդի յարկէն ներս: Վերջապէս կան կայքէջեր, որոնք այլ լեզուներով տեղեկութիւններ եւ լուրեր կը հաղորդեն, սակայն դժբախտաբար այդ բոլորը պիտի չչափողին փոխարինել հայ մամուլին ջերմութիւնը:

Եթէ օտար միջազգային մամուլը հիմնուած է նիւթական ակնկալութիւններով, սակայն հայ մամուլը միշտ եղած է ու պիտի ըլլայ ոչ շահաբեր ձեռնարկ, այլ հաստատուած կ'ըլլայ ընդհանրապէս անասկարկ նուիրումի ու լման նուիրագործման վրայ:

Քնական է նշմարած էք որ «Զաչակիր»ը գաղափարական դիմագիծ ունի: Արդարեւ առաջնորդուած ենք մայր կուսակցութեան՝ Ս.Դ. Հնչակեան գաղափարական հիմունքներէն, կ'արտացոլենք ինչ որ Հնչակեան կուսակցութեան ի նպաստ կ'արտայայտուի:

Հայաստանի քաղաքական կեանքին առընչութեամբ, կը բաւարարուինք միայն կարեւորագոյն լուրերու յիշատակութեամբ: Եւ մնալով հաւատարիմ մեր սկզբունքներուն, միշտ վեր կ'առնենք հայ ժողովուրդին շահերը, ըլլայ ան հայրենիքէն ներս կամ դուրս, որովհետեւ մեզի համար առաջնակարգ տեղ կը գրաւէ մայր հայրենիքին արժանիքները եւ անոր զաւակներուն ապագան: Չէզոք ու անկողմնակալ մերձեցումով կը ցոյցնենք հայրենիքի այժմու վիճակն ու անցուղադրէրը:

Նեցուկ կը կանգնինք բոլոր այն արժանի արուեստագէտներուն, որոնք պատուաբեր արդիւնքներ ձեռք կը բերեն, կամ մշակութային ձեռնարկներ կը կատարեն, առանց որեւէ խտրականութեան: Վերջապէս համոզուած ենք որ հայ մամուլը պէտք է արտացոլացու մը ըլլայ իր անմիջական շրջապատին: Այս առնչութեամբ կը գրենք հայ երիտասարդին ուսումնական յաջողութիւնները եւ որեւէ երիտասարդի մասին որ շինիլի աշխատանք կամ հայրենասիրական նպաստ կը բերէ իր ազգին ու հայրենիքին:

Նոյնպէս վեր կ'առնենք եզրափակող եկեղեցական, ազգային եւ մշակութային գործունէութիւնը իրենց զրական եւ բացասական կողմերով: Սակայն այս բոլորէն աւելի կարեւորը հայ գիրն է որ կանոնաւոր կերպով մուտք կը գործէ հայ տուն: Ահա այս է արդէն



սփիւռքահայ մամուլի մը գլխաւոր պարտաւորութիւնը, այսինքն՝ հայ ընտանիքը կապել իր հայ լեզուին հետ: Եւ թերթիս խմբագրութիւնը միշտ կը փորձէ հաւատարիմ մնալ այս նուիրական պատգամին, ջանալով որ նոր սերունդը սիրով կարգայ իր մայրենի լեզուով տրուած լուրերն ու յօդուածները:

Պիտի չուզենք անդրադառնալ թերթ մը հրատարակելու մեծածախս գումարներու մասին, միայն պիտի չիշենք որ ամէն տարի կ'աւելնան ծախսերը կեանքի սղութեան պատճառաւ եւ այս բոլորը կ'ըլլան անձնական նուիրական միջոցներով:

«Զաչակիր»ի հրատարակութեան ամբողջ շրջանին ըսինք ինչ որ մեզի ճշմարտի թուեցաւ, կեղծ չարքանք չմտտեցինք ասոր կամ անոր, վասն նիւթական ակնկալութեան: Կը մատնանշենք եւ կը քննադատենք ինչ որ սփալ կը տեսնենք: Այսպէս է որ «Զաչակիր» դարձած է հազարաւոր ընթերցողներու սիրելին, տրուած ըլլալով որ կը գրենք լուրերու վստահելի աղբւրներէ:

«Զաչակիր»ին եւ ընթերցողին միջեւ հիանալի միասնութիւն մը գոյութիւն ունի: Վստահ ենք որ դեռ պիտի շարունակուի երկար

տարիներ եւ բազմաթիւ առիթներ պիտի ունենանք միասնաբար տօնելու ուրախառիթ այլ հանգրուաններ:

Յիշող տարուան սեմին անհուն սիրով կ'ողջունենք մեր սիրելի աշխատակիցներն ու ընթերցողները եւ սրտազին շնորհակալութիւն կը յայտնենք անցեալի ու ներկայի բոլոր այն երախտաշատ անձերուն, որոնք որեւէ բանով մը իրենց բաժինը ունեցան եւ կ'ունենան արձանագրուած նուաճումներուն մէջ: Վերջապէս երախտաբար իսօք կ'ողջենք բոլոր այն հին ու նոր հիմնադիրներուն, աշխատակիցներուն ու բարեկամներուն, որոնք 60 տարուան ընթացքին, միջոցներ ու եռանդ չխնայեցին «Զաչակիր»ը վառ պահելու:

«Զաչակիր»ի յարատեւումը եզրափակող մէջ, 60 տարիներու մամուլային վաստակով, ընտիր թուրթով ու խնամեալ տպագրութեամբ, յոբելինական փայլուն անկիւնադարձ մըն է, ուր կը խայտան հոգիները «Զաչակիր» մեծ ընտանիքի անվերադարձ մեկնած հիմնադիրներու, խմբագիրներու եւ աշխատակիցներու:

Յարատեւութիւն կը մաղթենք «Զաչակիր»ին, իր հիմնադրութեան 60-ամեակին առթիւ:

ՀԱՆԳԻՄԱԻՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՈՐՀՆԷՔ ԻՍԹ ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՌՑ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՐ ԿԻՐԱԿԻ, ՓԵՏՐՈՒՍՈՒ 8, 2009

Առաւօտեան ժամերգութիւն ժամը 9:30 ին
Սուրբ Պատարագ ժամը 10:30 ին

ՊԵՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ՈՒ ՔԱՐՈՉԷ
ԹԵՄԻՍ ԲԱՐԵՆՆԱՍ ԱՌԱՋՆՈՐԴ՝
ԳԵՐՇ. ՏԷՐ ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Առընթերակայութեամբ՝ Եկեղեցոյ Հովիւ
Արթ. Տէր Նարեկ Ա. Քինյ. Մատարեանի

Առաւօտեան ժամերգութիւնները և
Սուրբ Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարէ՝
ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԴՊՐԱՅ ԴԱՍ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ,
«Կոմիտասեան» բազմաօայն եղանակաւ,
Ղեկավարութեամբ՝ Բրշ. Ստեփան Սրկ. Կէօպիւմեանի
Երգեհոնահարութեամբ՝ Ովսաննա Մեղրիկեանի

Մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
Եկեղեցոյս հիմնադիրներուն, բարերարներուն,
հոգաբարձուներուն և բոլոր այն անդամներուն,
որոնք անդարձ բաժանուած են մեզմէ:
Արարողութիւնէն յետոյ, տեղի պիտի ունենայ Մատաղի
Օրհնութիւն և պիտի բաժնուի ներկաներուն:
Կը հրաւիրենք հաւատացեալները ներկայ գտնուելու եւ
մասնակցելու արարողութեանց և մատաղին:

Այն հաւատացեալները որոնք ուխտ մը կամ փափաք մը ունին և
կուզեն օգտակար ըլլալ Սուրբ Սարգիս Եկեղեցիին նիւթապէս
մասնակցելով մատաղին, թող հեռաձայնէն եկեղեցի հեռուեալ
թիւով՝ (323) 269-0907

700 S. LA VERNE AVE. E. LOS ANGELES, CA 90022


Չեր Ճանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net
www.massisweekly.com

ՊԱՂՈՒԹԱՅԻՆ

ԵՐԱԺԻՇՏ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐԵԱՆԻ 70 ԱՄԵԱԿԸ

Կիրակի, Յունուար 18, 2009, կէսօրէ ետք ժամը 3:00էն սկսեալ, երաժշտասէր խառն հասարակութիւն մը, հայ եւ օտար, լեցուցած էր Լոս Անճելոսի գեղեցիկ սրահներէն մէկուն, «Zipper Hall» ճանչցուած դահլիճը: Առիթը կը հանդիսանար «Դիլիճան» երաժշտական շարքի 4րդ համերգը, շարք որուն ծնունդ տուողը կը հանդիսանայ Լարք երաժշտական ընկերութիւնը, իր անխոնջ եւ տաղանդաւոր գեղարուեստական ղեկավար Վաչէ Պարսումեանի հսկողութեամբ եւ նոյնպէս տաղանդաւոր ջութակահար Մովսէս Պողոսեանի անմիջական ղեկավարութեամբ: Այս համերգը եւս մաս կը կազմէ «Դիլիճան» միաւորի երաժշտական առաքելութեան, որ կը հանդիսանայ ցարդ կոխուած արահետներէն դուրս ելլելով, իրարու հետ ներդաշնակ կապ մը ստեղծող ժամանակակից հայ երաժշտութեան եւ միջազգային դասական երաժշտութեան միջեւ: Այսպէսով կարելի կը դառնայ «Դիլիճան»ի երաժշտական կատարումները գերծ պահել գոտի նեղ-ազգային պատկանելիութենէն եւ գանոնք դարձնելով միջազգային: Աւելին կայ տակաւին, «Դիլիճան» կը փորձէ իւրաքանչիւր անգամ կատարել ժամանակակից հայ երաժիշտներու նոր յորինումները, եւ գանոնք առաջին անգամ ներկայացնել, համաշխարհային գետնի վրայ: Տրամադրութիւն կայ մանաւանդ երիտասարդ հայ յորինողներու ստեղծագործութիւնները ներկայացնելու լայն հասարակութեան: Այս է նաեւ պատճառը որ երաժշտասէր մնալուն հասարակութիւն մը ներկայ կ'ըլլայ իւրաքանչիւր համերգին, եւ այս տարի, «Դիլիճան»ի 4րդ տարեշրջանն է, որուն 4րդ յայտագիրը կը կազմէ Կիրակի, 18 Յունուարի յայտագիրը:



Թաւջութակի «քոնչերթօն»: Այս արուեստագէտը յատկապէս կը սիրէ ժամանակակից հեղինակներու գործերէն կատարել: Ուրեմն, այս երեք հրաշալի կատարողները մոզական պահեր ստեղծեցին մեզի, Կիրակի օրուայ իրենց վերին աստիճանի հետաքրքրական, թէեւ քիչ մը սովորականէն աւելի վերացական կտորներու ընտրութեամբ: Այսպէս, յայտագիրը ունէր երեք բաժիններ, սկսելով հունգարացի երաժիշտ Կէորքի Քիւրթակի անուրջային եւ տպաւորիչ կարճ, 10-11 մասերէ բաղկացած մէկ գործի կատարում, որ կը յատկանշուէր քիչ մը երազային, քիչ մը անբացատրելի բովանդակութեամբ:

Երկրորդ մասը մախսթրօ Տիգրան Մանսուրեանի նոր մէկ ստեղծագործութիւնն էր, որ ներկաներուն հրամցուեցաւ իր 70-ամեակին առիթով: Ճոխ եւ ժամանակակից հանգամանք ունի Մանսուրեանի բազմատեսակ վաստակը օրքեսթրային գործերէն մինչեւ իր սոնատները, քոնչերթօնները, սենեկային երաժշտական, ինչպէս նաեւ առանձին գործիքներու համար ստեղծագործութիւնները: Այս անգամ եւս, Մանսուրեան յորինած էր «String Trio» կոչուած կտոր մը, որ արժանացաւ ներկայ խանդավառ հասարակութեան լուրջ գնահատանքին: Մովսէսեան-Քաշաբաշեան-Տը Սարամ եռեակի կատարումի աւարտին, մախսթրօն բեմ հրաւիրուեցաւ եւ ժողովուրդը յտընկալս յայտնեց իր գնահատանքը:

Ընդմիջումէն ետք, արուեստագէտ եռեակը, շուրջ մէկ ժամ տեւող եւ անմահ Մոցարթի ստեղծագործութիւնն էր «Diverimento» նկարագրուած մէկ գործի մատուցումը կատարեցին, գործ մը որ յազեցած էր այդ երիտասարդ հանճարի յատուկ ճոխութեամբ, գանազանութեամբ եւ թեթեւութեամբ:

Մէկ խօսքով, բացառիկ յայտագիր մըն է որ ներկաները վայելեցին, միեւնոյն ատեն իրենց յարգանքի տուրքը տալով հայ ապրող մեծագոյն երաժշտական

վարպետ, Տիգրան Մանսուրեանին, իր 70 ամեակին առիթով:

Յայտնեք նաեւ որ համերգէն անմիջապէս ետք «Լարք»ի երաժշտական ընկերութեան հրաւէրով, եւ իրենց կեդրոնատեղիէն ներս, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն-տօնակատարութիւն մը ի պատիւ Տիգրան Մանսուրեանին, իր 70 ամեակին ուրախ առիթով: Վարպետին շնորհաւորեցին ներկաներէն, մախսթրօ

Վաչէ Պարսումեան, «Լարք»ի տնօրէնուհի Թագուհի Արզումանեան, փրոֆ. Օշին Քէշիշեան, Թաւջութակահար Ռոհան Տը Սարամ, եւ այս սողերս ստորագրողը:
Երկար եւ ստեղծագործական ճոխ կեանք կը մաղթենք համակրելի մախսթրօ Տիգրան Մանսուրեանին, որ շարունակէ հայ երաժշտական երկնակամարը ճոխացնել իր ստեղծագործութիւններով:
ՅՍ



ՅՈՒՐՈՒԱԾ ԱՐԺԱԿԱԳԻՐ
ՄՏԵՓԱՆ ԱԼԱԶԱԶԵԱՆԻ
ԾՆՆԴԵԱՆ 85-ԱՄԵԱԿԻՆ

- Կազմակերպութեամբ՝
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան
Թեքեան Մշակութային Միութեան
Համազգային Գրքական եւ Մշակութային Ընկերակցութեան
Նոր Սերունդ Մշակութային Միութեան
Վկայութիւններ
ՍԻԼՎԱ ԳՐԳՈՒՏԻԿԵԱՆ
ԱԿԱԳԵՄԻԿՈՍ ԼԵԻՈՆ ՀԱՅՎԵՐՏԵԱՆ
ԱԿԱԳԵՄԻԿՈՍ ՍԵՒՄ ԿՐԶՈՒՄԵՆԵԱՆ
ԱԿԱԳԵՄԻԿՈՍ ԵԳՈՒՐԳ ԶՐԲԱՇԵԱՆ
Ելոյք կ'ունենան՝
ՓՐՈՅ. ՕՇԻՆ ՔԵՇԻՇԵԱՆ
ՎԱՉԷ ՍԵՄԵՐՅԵԱՆ
Հանդիսավար՝
ՏՈՔԹ. ԿԻՐԱԿՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
Գեղարուեստական յայտագիր
Ասմունք՝ ՆՈՒՆԷ ԱՌԵՏՈՒՄԵԱՆ
ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԳՉԱՅՈՒՄԸ
Ղեկավար՝ ՄԻՔԱՅԵԼ ԱՌԵՏՈՒՄԵԱՆ
ԼԵԼԻԱ ՊԱՐԱՆՈՒՄԸ
Պարուսույց՝ ԼԵԼԻԱ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԿԻՐԱԿԻ, 8 ՓԵՏՐՈՒԱՐ, 2009, Կ.Ե. ԺԱՄԸ 6:00-ԻՆ
Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի
Առաջնորդարանի Գալայճեան սրահին մէջ
3325 N. Glenoaks Boulevard, Burbank

ՄՈՒՏՔԸ ԱԶՍ

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ «ՄԻՓԱՆ» ԵՐԳՉԱԽՈՒՄՔԻ ԶԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30 ՏԱՐԻՆ

Այս տարի լրանում է Լոս Անճելոսի «Միփան» երգչախմբի հիմնադրութեան 30 տարին: Յոբելիական համերգ-երեկոյին պատրաստուելու համար, երգչախմբի հիմնադիր, գեղարուեստական ղեկավար ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԸ հրաւիրում է երգչախմբի բոլոր հին եւ նոր անդամներին առաջին փորձին, Յունուար 26ին, երեկոյեան ժամը 8ին, մասնաորոյի բնակարանում:
Մանրամասնութիւնների համար հեռաձայնել՝ (323) 466-3726, (323) 660-7152, (626) 797-9788:

ԸՆԿԵՐԱՅԻՆ

ԱՄԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ՆՈՐԸ ԱՐԴԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Նորոգող հմուքեաց, Նորոգեա եւ գիս, Նորոգ գարդարեա: ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ԱԶԱՏՈՒՀԻ ՍԻՄՈՆԵԱՆ

Ընկերութեան կեանքի պատմական հոլովոցին մէջ, աւանդական ու նորը իրարու ազդեցութեամբ շղթայի մը օղակներն են: Իւրաքանչիւր սերունդ կը բերէ իր նպաստը՝ օղակ մը եւս աւելցնելով մայր շղթային եւ պահելով շարունակականութիւնը մարդկային քաղաքակրթութեան ընթացքին: Յեղափոխութիւններու, պատերազմներու, արագ թափով յառաջացած ընկերային հիմնական յեղաշրջումներու ընթացքին, եթէ նոր օղակ մը չաւելնայ նախկինին վրայ, կապը կը խզուի անցեալին ու ներկային միջև: Ատոր որպէս հետեւանք, չփոթ մը կը ստեղծուի մարդկային ընկերութեան ներկայի ու ապագայի նպատակներուն շուրջ, անելի վիճակի կը մատնուի մարդկութիւնը, ճշմարիտ ճամբան կը կորսնցնէ ան:

Նման անելի մատնուած է 20-րդէն 21րդ դար անցումի մէջ գտնուող մարդկային ընկերութիւնը: 20րդ դարը թատերաբեմ հանդիսացաւ երկու համաշխարհային պատերազմներու եւ արհեստագիտական հսկայաբայլ յառաջդիմութեան: Այդ պատճառաւ հսկայ պարապոթիւն մը ստեղծուած է մարդկային մշակոյթի աւանդութիւններուն եւ ներկային միջև, որովհետեւ օղակը խոյս տուած է: 20րդ դարը կը յատկանշուի մարդկութեան հանդէպ ամենէն անգութ վայրագութիւններով, սկսելով Հայոց ցեղասպանութենէն, նացի բարբարոսութիւններէն: Թէքնիքի հսկայաբայլ յառաջդիմութեան հետ զուգահեռ կ'ընթանայ մարդու հանդէպ վայրագութիւնը:

Այս տուեալներու լոյսին տակ, ամէն հասնող նոր սերունդ, պատասխանատուութիւն զգալու է վերահաստատելու, վերասահմանելու ընկերութեան նպատակները: Վերատեսութեան ենթարկելու է աւանդական արժէքները, մեթոտները: Իւրաքանչիւր նոր սերունդ պէտք է նոր պայմաններէն թելադրուող լուծումներ առաջարկէ, միջոցառումներ որդեգրէ: Այս է ներկայ սերունդին առջեւ դրուող մարտահրաւերը: Եթէ աւանդական այս սկզբունքները մնայուն կերպով չվերահաստատուին, կը մոռցուին: Գաղափարները կը մաշին ո՛չ թէ անոր համար որ ճշմարիտ չեն, այլ որովհետեւ անոնք պէտք է վերաթեւոցողութիւն ամէն դարու յատուկ ոճով: Միջոցառումներն ու մեթոտները հարկաւոր է փոխել, պատշաճեցնելու համար ներկայ իրականութեան: Ընկերութեան նպատակները եւ մարդկային հիմնական արժէքները պէտք է կրկին անգամ շեշտուին, անոնց տալով նոր տարագ եւ գունաւորում, մեկնելով այսօրու ընկերութեան պահանջներէն:

Այսօր մարդիկ ինքզինքնին անզօր կը զգան ազգային եւ միջազգային իրադարձութիւններուն առաջ: Փոփոխութիւնները այնքան մեծ են, որ կը կարծուի թէ աւանդութիւնն ու ժառանգութիւնը ժամանակավրէպ հասկացողութիւններ են եւ լուծում չեն բերեր իրենց ներկայի դիմագրաւած խնդիրներուն:

Սակայն, վտանգը չի գար այնքան խնդիրներու տարողութենէն, որքան աւանդակներէն ըն-

դունուած հիմնական սկզբունքներու տկարացումն է անոնց վերացումն: Նաե՛ւ՝ միջոցներու եւ նպատակներու միջեւ ստեղծուած շփոթէն:

20րդ դարու վերջաւորութեան, մարդու տիրապետութիւնը նիւթին վրայ հասած է հզօր իշխանութեան: Համակարգիչներու, մարդամեքենաներու, անջրպետի գրաման, բժշկական նորանոր գիտեցողութիւններու, էլեկտրոնագիտութեան յառաջդիմութիւնները մարդկութիւնը կը շրջապատեն: Սակայն, այդ յառաջդիմութեան հետ բաղադրած՝ մարդու գիտութիւնը, անոր մտքին, հոգիին, հոգեբանութեան, ընկերային ինդիւստրիաներուն, դաստիարակութեան, հասարակական վերաբերող այլազան ինդիւստրիեր կը մնան ամբողջութեամբ չպեղծուած մարդեր: Կատարուածը ոչինչ է բաղադրած գիտական եւ արհեստագիտական յառաջդիմութեանց: Մարդու գիտութիւնը ետ մնացած է խղճալիօրէն:

Ո՞րն է ուրեմն դարուս չափանիշը. արհեստագիտական յառաջդիմութիւնը թէ մարդկային ու հոգեկան արժէքներու առկայութիւնը ընկերութեան կեանքին մէջ: Վերջին հաշուով մեր թոռները 21րդ դարու վերջաւորութեան շատ աւելի մեծ գիտական հսկանք պիտի յառաջացնեն, քան ինչ որ ունինք եւ որոնցմով կը զմայլինք այսօր: Ինչպէս մոմի լոյսը էլեկտրականութեան հետ բաղադրած տկար է ու անզօր, ձիով քրուած կառքը անբաղդատիելիօրէն դանդաղ՝ օդանաւային ներկայ արագ ճարտանքներուն դիմաց, նոյնպէս մեր ներկայ յառաջդիմութիւնները ապագային պիտի համարուին չնչին:

Աւանդականը մշակոյթն է, մարդուն ստեղծագործութիւնն է արուեստներու, գրականութեան, երաժշտութեան, ճարտարագիտութեան եւ յարակից մարզերու մէջ: Ընկերութեան համար անոր ստեղծած օրէնքներն են, անոնց ժողովրդավարական բնույթը, նաեւ մտածումի ազատութիւնը, իրաւունքներու հանդէպ յարգանքը, կրթութիւնը, ընտանիքը, կրօնը:

Քաղաքակրթութիւնը նորն է, արդիականը, թէքնիքը, գիտական յառաջդիմութիւնները, նիւթական շօշափելի իրագործումները:

Այսօրուան սերունդին պարտքն է գիտական նուաճումներն ու արհեստագիտական սիրանքները օգտագործել մարդուն համար, անոր առողջութեան, բարօրութեան ու երջանկութեան համար: Այդ ձեւով է, որ նոր օղակը կապած կ'ըլլանք ընկերութեան պատմական մայր շղթային եւ անարգել կը յառաջանանք մեր սերունդին վիճակուած պատմական դերը կատարած ըլլալու հոգեկան բաւարարութեամբ:

Ներկայ դարու ազդեցութիւնը մարդ անհասին վրայ կը բնորոշուի՝ անոր աւանդակներէն ջատագովուած բարոյական նկարագրի եւ բարոյական ամէն կարգի արժէքներէ մերկացումով եւ նիւթական արժէքներու վրայ դրուած շեշտով: Մարդը մարդ դարձնողը իր նկարագիրն է, բարոյական կենդանացիքը: Աւանդական մարդը նկարագիր ունեցող մարդն է, որ սկզբունքներ ունի եւ ուրեմն կայուն է իր կեցութեանքներուն մէջ, ամէն օր տեսակէտ ու սկզբունք չի փոխեր: Ան

խոստումները կը յարգէ, ինչ որ ալ արժեն անոնք: Բարեկամութիւններու հանդէպ հաւատարիմ է եւ վաղանցուկ շահերու համար չի գոհեր գանտնք: Կը մնայ հաստատ ու ամուր իր յանձնարարութիւններուն նկատմամբ, մինչեւ վերջնական լուծումի հասցնելով գանտնք: Այսօր պակասը կայ այդպիսի յանձնարարութեան հոգեկան բարեմասնութիւն ունեցող մարդոց: Թէեւ նման հոգեկան, ազգային, բարոյական ու մտաւորական շնորհներով օժտուած մարդը իրեն արժանի յարգանքը չի վայելեր այսօրուան ընկերութեան մէջ, եթէ իր այդ բոլոր բարեմասնութիւններուն չընկերանայ նաեւ նիւթական բարեկեցութիւնն ու հարստութիւնը:

Այսօրուան մարդը պարպուած է մարդը մարդ դարձնող յատկութիւններէն: Հաշիւ է ամբողջութեամբ: Իր ամէն մէկ քայլն ու մշակած բարեկամութիւնը անպայմանօրէն չա՛հ մը կը հետապնդէ: Առանց խղճահարութեան կը դաւաճան է իր բարեկամութիւններուն եւ սկզբունքներուն, որովհետեւ պատահապաշտ նկարագիր ունի: Ներկայ մարդը առաւելութիւններ շատ ունի... զարգացում, լեզուներու իմացութիւն, ճամբորդական լայն փորձառութիւններ եւ դիւրութիւններ, միջազգային յարաբերութիւններ ու կենցաղային բարձր մշակոյթ: Սակայն, երբ առիթը կը տրուի մօտէն շփուելով ճանչնալու արտաքին շարքին ետին կանգնած մարդը, յուսախաբուութիւնը կը պատէ քեզ, քանի որ ներքին մարդը, յուսախաբութիւնը կը պատէ քեզ, քանի որ ներքին մարդը, բարոյականի տէր մարդը անհետ կորած է իր մէջ:

Մարդու, աւանդականօրէն ընդունուած արժանիքներուն եւ հոգեկան բարեմասնութիւններուն նախնայը կը բացատրուի նաեւ անոր կրօնական հաւատքի տկարացումով: Քրիստոնէական կրօնը հիմքն է բարոյականութեան, եւ քանի որ մարդիկ գայն մէկդի դրած կ'ապրին ու կը գործեն արդի ժամանակ-

ներուն՝ հիմնականին մէջ անհատու ու անկրօն՝ զարմանալի չէ որ մարդը դարձած է անմարդկային իր արարքներուն, ապրելակերպին եւ զգալու կերպին մէջ: Ներկայ յուսահատական կացութիւնը շրջելու համար, անհրաժեշտ է անհատ մարդուն կողմէ, խոր ինքնաքննութիւն մը իր կեանքի նպատակներուն շուրջ, մարդու եւ Աստուծոյ վերադասաւորման եւ կրօնական հաւատքի առնչութեան՝ իր առօրեայ կեանքին հետ: Այս բոլորը կատարուելու են յատկապէս առաջնորդութեամբ եւ օգնութեամբ մեր ժողովուրդի ամենակեղրոնական ու ազդեցիկ աւանդութիւնը մարմնացնող Հայց. Եկեղեցւոյ: Այսօրուան անհատի կեանքին համար անհրաժեշտ է սակայն, որ եկեղեցին ծէսէն ու արարողութենէն վեր՝ հանապազօրեայ հոգեկան սնունդ ջամբէ իր հաւատացեալներուն, վերասահմանէ քրիստոնէական սկզբունքները՝ արդի կեանքի պայմաններու լոյսին տակ: Վերահաստատել աւաղականօրէն մեզի հասած մեր հայրերու հաւատքին էական տարրերը եւ ուղղութիւն տալ այսօրուան մարդուն՝ լուծելու իր հարցերն ու դժուարութիւնները արդի շփոթահար ընկերութեան մէջ:

Հայ ընտանիքը կը ներկայացնէ մեր ժողովուրդի աւանդներու պահպանման ամենակարեւոր հաստատութիւնը ու անոր կարեւոր իրագործումը դարերու ընթացքին: Տան մեծերը՝ մեծ հայր, մեծ մայր, զաւակներ, հարսեր, թոռներ՝ մէկ երգիքի տակ կ'ապրէին ամենայն կարգապահութեամբ, ականածանքով ու համակերպումի սքանչելի ոգիով: Օրհնութիւն կար տան մէջ, երջանկութիւն: Այսօրուան ընտանեկան կեանքը, սակայն, կարելի է անոր հիմնական գիծերը փոխանցել նոր սերունդին՝ որպէս աւանդութիւն: Զօր օրինակ, զոյգերուն իրարու հանդէպ ունեցած սէրն ու հաւատարմութիւնը, ծնողաց

Շար. ք էջ 19

EXQUISITE Mediterranean Mouthwatering Gourmet Cuisine
BANQUET HALL - SPECIAL EVENTS - CORPORATE FUNCTIONS - HOOKA PATIO
Golden Nights
Celebrate Your Valentines Day
Amazing Covered Heated Patio-Seating
Banquet - up to 160 person (Inside)
Catering for all Occasions
Live Entertainment Every Friday & Saturday
Belly dance show
714-228-9730
Happy Valentine's Day
Complete Lebanese and Armenian Mezza's
Large Selection of Fine Flavored - Hookah
Open 11 am - 9 pm
Lunch & Dinner
Golden Nights Mediterranean Cuisine
Southern California's #1 Destination For Family Gathering and Entertainment
7115 Beach Bl., Buena Park, California

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԵՏՔԵՐՈՎ...
ԴԵՂԻՆԱԿ՝ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՑԵԱՆ

ԱԲՐՈ ՊԷԼԵԱՆ


Կլինտոնը քաղաքը հաստատուել է ետք մեծ բախտը ունեցած ծանօթանալու եւ միանալու վերնատուն խումբին, որ կը բաղկանայ մօտ 15 անդամներէ եւ շաբաթը երկու անգամ կ'ունենայ իր հանդիպումները բարեկամական հաճելի միջոցառումներով, ուր կ'արծարծուին ազգային, քաղաքական, մշակութային, մարզական եւ այլ հետաքրքրական հարցեր, որ կը յուզեն մեզ: Յաճախ կը վայելենք այցելուները պատկառելի մտաւորականներու, արուեստագէտներու եւ ծանօթ անձնավորութիւններու եւ կը փոխանակենք մեր մտքերը փոխադարձ հասկացողութեամբ եւ յարգանքով:

Ահա, այս խումբին ընդմէջէն ծանօթացանք նաեւ պրն. Տիրապետ Սարաֆեանի, որ խոհուն հայրենակից մըն է, իր անմիջական ու հեզահամբոյր եւ համակրելի բնավորութեամբ: Ան հաճելի գրուցակից մըն է եւ երկար տարիներ ծառայած է Ս. Գ. Հ. Կուսակցութեան եւ Հայ Մարզական Միութեան շարքերէն ներս, ունենալով ազգային հասարակական եւ միութենական բեղուն գործունէութիւն Սուրիոյ, Լիբանանի եւ Ա.Մ. Նահանգներու մէջ եւ արժանացած է յոբելինական հանդիսութեան, առ ի երախտագիտութիւն իր մատուցած անսակարկ ծառայութիւններուն համար:

Մեր հանդիպումներու ընթացքին, պրն. սարաֆեանի հետ կարեւոր է գրուցել բազմաթիւ նիւթերու շուրջ: Օր մըն ան պատմեց գորդուրի յուշեր իր բանաստեղծ երկու մեծ մարզական միութիւններու Հ.Մ.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի միացեալ գործունէութեան մասին, որով կարելի եղաւ Պէյրութ հրաւիրել հայրենի «Արարատ 73» խորհրդային Միութեան ֆուլբոլի կրկնակի ախոյեան խումբը, որ արտակարգ եւ բացառիկ ոգեւորութիւն ստեղծեց համախմբելով բազմահազար հայեր, որուն նման չէր տեսնուած այդ համայնքին մէջ:

Վերջիջեալ փառաւոր ծրագրի իրագործման գլխաւոր դերակատարներէն մէկը հանդիսացած է պրն. Սարաֆեանը, ինչպէս նաեւ սփիւռք-Հայաստան այլ մարզական եւ մշակութային հանդիպումներու, որոնց կարգին Երեւանի «Երգ ու Պարի Անսամպլի» այցելութիւնը:

Արդարեւ, իմացանք որ ծերունագար մտաւորականը գեղեցիկ գափառար ունեցած է եւ աշխատանքի լծուած գրի առնելու իր յուշերը եւ հատորի մը մէջ ամփոփելու Հ.Մ.Մ.ի լայնածաւալ գործունէութիւնը 1921էն 1959ը: Այսինքն մօտ չորս տասնամեակներու



եղելութիւններ, յուշեր, դէպքեր, նկարներ, անձինք նուիրեալք որ անցած են վերջիջեալ միութեան ծոցէն եւ աշխատած են անոր վերելքին համար: Վերջապէս, կոթողական աշխատանք մը նուիրեթեան եւ մտաւորութեան փրկելու անոր պատմութիւնը:

Սոյն ծրագրերը իրագործելու համար պրն. Սարաֆեան մեկնեցաւ Պէյրութ, իր ապրած միջոցառումներէն մէջ գրելու այդ յուշամատենը եւ հոն դիմակալեց մէկ նոր ուժեղ հարուած մը, որ պայծեցաւ մեր սիրելի եւ չքնաղ Լիբանանի գլխուն, ամպուտեցաւ ջինջ երկինքը...:

Պրն. Սարաֆեանը գաղջ ջուրերու մէջ լողացող գործիչ մը չէ եղած: Ան միշտ պայքարած է եւ հասած է իր նպատակին ի սէր իր ազգին կազմակերպութեան եւ Հ.Մ.Մ.ին, ուրեմն յաղթահարելով բոլոր դժուարութիւնները յաջողութեամբ ամբողջացնելով իր սկսած գործը, լայն ժպիտով մը վերադարձաւ Լոս Անճելըս եւ իր վաստակը յանձնեց առ որ անկ է:

«Հ.Մ.Մ.ի Պատմութեան Հետքերով» գիրքի ներկայացման օրը մենք ակնատես դարձանք հեղինակի վայելած ժողովրդականութեան, որ եկած էր իր երախտագիտութիւնը յայտնելու եւ գնահատելու մեծ գոհողութիւններով պատրաստուած յուշամատենը որ կը բաղկանայ 413 նկարագարով էջերէ, ուր կը ներկայացուին Միութեան լայնածաւալ գործունէութիւնը մարզական, ընդհանրական, մշակութային սկզբնական եւ այլ մարզերէ ներս:

Նախկին Հ.Մ.Մ.ական ըլլալով բաւականին ծանօթ ենք Հ.Մ.Մ.ի գործունէութեան եւ կարգալով Յուշամատենը կը հանդիպինք դէմքերու եւ դէպքերու, որոնք կը յուշեն մեզ եւ կը յիշեցնեն մեր


Շաբ.ը էջ 19

«ԱՐԾԱԹԵ ԳՕՏՈՒ ԴԵՏՔԵՐՈՎ»
ԴԵՂԻՆԱԿ՝ ԱՍՏԴԻԿ ԲԱԲԱՅԵԱՆ

Խմբագրութիւնն շնորհակալութեամբ ստացած է իրանահայ կրթական վաստակաւոր մշակ «Թովմասեան» դպրոցի երկար տարիներու տեսչուհի, Թեհրանի Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան տիկնանց բաժանմունքի ատենապետուհի՝ Աստղիկ բաբայեանի Երեւան լոյս տեսած նոր հատորը «Արծաթէ Գօտու Հետքերով» 192 էջերէ բաղկացած հատորը:

Հետաքրքրական, յուշագրական պատմութեամբ քննարկաւոր իմբազրած են Գէորգ Եղրճեան, եւ Թեհրանի «Արաքս» շաբաթաթերթի երկարամեայ իմբազր՝ Մովսէս Քէշիշեան:

Գիրքին մէջ ամփոփուած են շնորհալի արձակագրին թիւով 19ը կարճ պատմութեամբ քննարկաւորութեամբ են առօրեայ կեանքէն, եւ կառնչին օրուան անցու դարձերու եւ երեւոյթներուն: Գիրքին մեկենաման է Մակի Նազարեան, զոր գիրքը հրատարակած է իր ծնողաց յիշատակին: «Արծաթէ Գօտու Հետքերով» հատորը վաստակաշատ հեղինակին ճիշդ գիրքն է, որ իր միւս գիրքերու նման մեծ ընդունելութիւն գտած է, ընթերցող հասարակութեան մէջ: Աստղիկ Բաբայեանին լեզուն սահուն է, պարզ ու



հասկնալի: Հեղինակը խուսափած է չափազանցուած պատկերներ ներկայացնելէ: Գիրքին իրական արժէքը ատոր մէջ պիտի փնտուել: Ողջունելով իրանահայ արձակագրին այս հատորին լոյս ընծայումը, կը մաղթենք անոր նորանոր նուաճումներ գրական ասպարէզին մէջ, յարատեւութիւն եւ տոկոսութիւն ազգային-հասարակական ասպարէզներում:

Մ.

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

ԱՍՏԴԻԿ ԲԱԲԱՅԵԱՆ

Կէս գիշեր էր: Նստած գրասեղանի ետեւը՝ աշխատում էր:

Հնչում է հեռախօսի զանգը: Տատանուեցով վերցնում է լսափողը:

- Այո, լսում եմ:

- Բարի գիշեր, ես եմ՝ Զիվանին:

- Ո՞վ:

- Զիվանին: Լսում ես, Զիվանին:

Յանկարծակիի եկաւ: Քառասուններկար տարիներից յետոյ լսում էր նրա ձայնը: Մի կարճ պահ մնաց անշարժ եւ լսափողից հնչող ալօները մնացին անպատասխան...

19-ամեայ Արփին աւարտում է միջնակարգը. մասնակցում համալսարանի մուտքի քննութիւններին եւ չի յաջողում: Նրա ծնողների բուռն ցանկութիւնն էր, որ իրենց դուստրը բարձրագոյն կրթութիւն ստանար: Ուստի, նրա ձախողումն անհանգստացնում է ծնողներին, յատկապէս՝ հօրը: Նրանք աշխատում են մի ելք գտնել Արփիին արտասահման ուղարկելու համար: Հայրն այս ուղղութեամբ բաւական ջանք է թափում եւ վերջապէս յաջողում է ինչոր բարեգործական միութեան կամ հաստատութեան կրթաթոշակով ուղարկել Պէյրութ:

Սկսնական շրջանում, տան կարօտը նեղացնում էր Արփիին: Այնտեղ ամէն ինչ անծանօթ էր, օտար ու մի քիչ էլ խորթ: Բայց ցամաքակը սահելու հետ սկսեց ընտելանալ իր նոր միջավայրին: Այդ խնդրում մեծ դեր խաղաց իր նոր ընկերուհի Վարդան: Նա բարի ու զգացամբար էր եւ շատ շուտ կարողացաւ թափանցել Արփիի ներաշխարհն ու փարատել նրան իր շփոթ վիճակից: Ազատ օրերին, Վարդան նրան երբէք մենակ չէր թողնում: Տօների արձակուրդին, երբ ուսանողները թողնում էին գիշերօթիկը, Արփին առաջիններից էր, որ Վարդոյի հետ գնում էր արձակուրդի ու վայելում Վարդոյի

ընտանիքի ջերմ հիւրընկալութիւնը, յատկապէս՝ Վարդոյի մօր անկեղծ փաղաքշանքը:

Արփին ու Վարդան, իրենց ազատ ժամերին յաճախ միասին պտոյտի էին գնում: Պատահում էր, որ նրանց ընկերակցում էր Զիվանին՝ Վարդոյից երկու տարիով մեծ եղբայրը:

Զիվանին իր ընկեր-ընկերուհիներով ամիսը մէկ անգամ հաւաք էր կազմակերպում, որին մասնակցում էր նաեւ Վարդան: Զիվանու եւ Վարդոյի ցանկութեամբ, այդ հաւաքին մասնակցում էր նաեւ Արփին:

Գնալով Արփին յայտնուեց Զիվանու ուշադրութեան կենտրոնում: Բացայայտ որեւէ բան չկար, բայց երբ երկուսի նայուածքներին իրար էին հանդիպում, նրանց աչքերի հայելու մէջ կարելի էր կարդալ ջահել սրտերի քաղցր ու հաճելի թրթիւրը, որն սկսել էր հասունանալ եւ կարծես ծլարձակած գեղեցիկ սիրոյ էր յանգելու:

Մի օր Զիվանին Արփիին գիրքով թիւ ուղեկցեց: Հրաժեշտի պահը խորհրդաւոր էր: Նրանք կանգնել էին դրան սեմին, դէմդիմաց, լուռ ու մոռնով: Այդ պահին նրանք իրենց անթարթ նայուածքներով, առանց խօսքի ի յայտ բերեցին այն՝ ինչ թաքցրած ունէին իրենց սրտերում: Յետոյ, Զիվանու շրթները քնքնշուրթեամբ հպուցեցին Արփիի շառագունած դէմքին: Արփիի սիրտը թփրտաց մի անմեկին խոր զգացումից եւ նա մնաց անշարժ: Զիվանու շրթներն ապա հանդարտ սահեցին դէպի Արփիի գողողացող շրթները: Դա առաջին սիրոյ առաջին համբոյրն էր, որ դրոշմոնց Արփիի շուրթերին եւ սիրտը լցրեց բոնկուած սիրոյ անուշ թրթիւններով:

Այդ վայրկեանից Արփիի առաջ բացուեց մի նոր աշխարհ, որտեղ ամէն ինչ գեղեցիկ էր, անբիծ ու քաղցր:

Ժամանակը գնում էր իր հու-

Շաբ.ը էջ 18

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՊՈՅՆԵԼ (626) 797-7680

ՇԱԽՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԱՐՄԱՆ ՓԱՇԻԿԵԱՆ ԵՒ ԼԻԼԻԹ ԳԱԼՈՅԵԱՆ ԱԽՈՅԵԱՆ

Դրամատիկ վերջաբան ունեցած շախմատի Հայաստանի 2009թ. տղամարդկանց առաջնությունը: Երկար ժամանակ մրցաշարային աղիւսակը գլխաւորող Տիգրան Քոթանջեանը վերջին 2 տուրերում ախոյեանի կոչումը գիշեց աւելի երիտասարդ Արման Փաշիկեանին:



Արման Փաշիկեան

Քոթանջեանի համար ճակատագրական էր 12-րդ տուրը, երբ Տիգրանը սեւերով պարտուեց Հայաստանի հաւաքականի պահեստային խաղացող Արտաշէս Մինասեանին: Այս պարտութիւնից անմիջապէս օգտուեց Արման Փաշիկեանը, որը ոչ-ոքի խաղաց Աշոտ Անաստասեանի հետ եւ հաւասարուեց առաջատարին: Վերջին՝ 13-րդ տուրից առաջ Տիգրան Քոթանջեանը եւ Արման Փաշիկեանը վաստակել էին 7.5-ական միաւոր: 13-րդ տուրում Քոթանջեանը սպիտակներով յաղթեց Աւետիք Գրիգորեանին: Արման Փաշիկեանը նոյնպէս սպիտակներով առաւելութեան հասաւ օլիմպիական ախոյեան Տիգրան Պետրոսեանի նկատմամբ: Առաջատարները դարձեալ հաւասարուեցին իրենց ակտիւում ունենալով 8.5-ական միաւոր, սակայն լրացուցիչ ցուցանիշներով ախոյեանի կոչումը նուաճեց Փաշիկեանը:

3-րդ հորիզոնականում հանգրուանեց Զաւէն Անդրէասեանը, որը վաստակել էր 8 միաւոր: Նոյնքան միաւորով 4-րդ տեղում յայտնուեց Արթուր Զիբուխեանը, որը յաջող մեկնարկից յետոյ չկարողացաւ զարգացնել յաջողութիւնը:



Լիլիթ Գարիբեան

Հայաստանի հաւաքականի խաղացող Տիգրան Պետրոսեանը, որը ամենաբարձր վարկանիշը ուներ մրցաշարում, 7 միաւորով հանգրուանեց 8-րդ հորիզոնականում:

Մրցաշարային աղիւսակը 3.5 միաւորով եզրափակեց Արա Մինասեանը: Աւարտուեց նաեւ կանանց Հայաստանի առաջնությունը: 7.5 միաւորով ախոյեանի կոչումը նուաճեց Հայաստանի հաւաքականի խաղացող Լիլիթ Գարիբեանը:

Հայաստանի հաւաքականի մէկ այլ խաղացող Սիրանուշ Անդրէասեանը 7 միաւորով դարձաւ փոխ-ախոյեան:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԷՒԱ ՖՈՒՏԳՈՒԼԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ԳԻԼԻ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ

Հայաստան-Թուրքիա ֆուտպոլային պատասխան հանդիպումը տեղի կ'ունենայ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիլի ծննդավայր Կեսարիայում: Նման որոշում է կայացրել Թուրքիայի ֆուտպոլի ֆետերացիան: Հանդիպումը տեղի է ունենալու 2009 թուականի Հոկտեմբերի 14-ին Կեսարիայի «Քադիր Հաս» մարզադաշտում, որի շինարարական աշխատանքները նախատեսուած է աւարտին հասցնել մինչեւ ընթացիկ տարուայ Ապրիլի 1-ը:

ՈՒԵՖԱ-Ի «ԱՐԴԱՐ ԽԱՂ» ՄՐՅՈՅԹՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ 17-ՐԴ ՏԵՂՈՒՄ Է

Հայաստանն ՈւեֆԱ-ի հրապարակած «Արդար խաղ» մրցույթի վերջին ցուցակում 7,937 գործակցով եւ 28 միջազգային պաշտօնական խաղերով զբաղեցնում է 17-րդ տեղը: Առաջին տեղում Նորվեգիան է՝ 8,35 գործակից, 57 խաղ, 2-րդ՝ Դանիան՝ 8,201 գործակից, 69 խաղ, 3-րդ՝ Շոտլանդիան՝ 8,186 գործակից, 51 խաղ:

Նշենք, որ Ռուսաստանը 16-րդ տեղում է՝ 7,959 գործակից, 77 խաղ, Վրաստանը՝ 36-րդ՝ 7,746 գործակից, 28 խաղ, Ադրբեջանը՝ 40-րդ՝ 7,676 գործակից, 37 խաղ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՋԱՏ ՈՃԻ ԸՄԲՇԱՍԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի 130 մարզիկներ Յունուարի 23-25-ը Երեւանում վիճարկել են ՀՀ ազատ ոճի ըմբշամարտի ախոյեանի կոչումները:

55կգ քաշային կարգում յաղթել է Միհրան Զաբուրեանը, արծաթէ մեդալ է նուաճել Գեղամ Յարութիւնեանը, բրոնզէ մեդալներ՝ Արտեմ Յամբարձումեանը եւ Օհան Գիքիսեանը՝ բոլորն էլ Երեւանից: 60կգ քաշային կարգում ախոյեան է դարձել Երեւանցի Արթուր Առաքելեանը, 2-րդ տեղում է վանաձորցի Հայկ Եղշատեանը, 3-րդ՝ Արարատ Մարտիրոսեանը՝ Արտաշատից, եւ գիւմրեցի Արտեմ Նալբանդեանը:

66կգ քաշային կարգում լաւագոյնը վանաձորցի Ժիրայր Յովհաննիսեանն էր: Արծաթէ մեդալակիր է դարձել Աւետիս Առաքելեանը՝ Արտաշատից, իսկ բրոնզէ մեդալակիրներ՝ Համազասպ Յովհաննիսեանը՝ Արտաշատից, եւ գիւմրեցի Վարդան Պապիկեանը: 74կգ քաշային կարգում ՀՀ չեմպիոն է դարձել Սուրէն Մարկոսեանը՝ Գառնիից, որը եզրափակիչում յաղթել է Երեւանցի Հայկ Կարապետեանին: Բրոնզէ մեդալները բաժին են ընկել գիւմրեցի Մերուժան Զաղոյեանին եւ Երեւանցի Սամուէլ Աղեանին: 84կգ քաշային կարգում յաղթել է Երեւանցի Յարութիւն Գէորգեանը, փոխախոյեան է դարձել գիւմրեցի Դաւիթ Պապոյեանը, բրոնզէ մեդալակիրներ՝ Սարգիս Անտոնեանը՝ Արագածոտնի մարզից եւ Երեւանցի Գէորգ Աւարեանը:

96կգ քաշային կարգում յաղթող է ճանաչուել Էդգար Ենոքեանը, 2-րդ տեղում է Գրիգոր Մկրտչեանը, 3-րդ՝ Վահագն Մանուկեանը եւ Ռոբերդ Աբրահամեանը՝ բոլորն էլ Երեւանից: 120կգ քաշային կարգում յաղթանակ է տօնել Երեւանցի Արման Գուլեանը, 2-րդ տեղում է վահան Գրիգորեանը, 3-րդ՝ Վաչիկ Եղիազարեանը եւ Տիգրան Քեսոյեանը՝ բոլորը Երեւանից:

BIG BEAR 2009

February 20th-22nd

Homenmen is hosting its annual Big Bear Winter Getaway!

Bring your friends and family along and join the fun!

FOR RESERVATIONS (818)590-2824 RAZMIG

\$120 GENERAL
\$110 FAMILIES OF 3 OR MORE
\$100 ATHLETES

INCLUDES:
ROOM AND BOARD
FOOD
GAMES
FUN

Hosted By
Z.U.U. HOMENMEN 19 21

Location
BIG BEAR SPORTS RANCH